Թուել եւ նկարագրել այստեղ, անկարելի է։ Բայց Թորոս Ռոսլինը այնքան բեղմնաւոր է իբրեւ բարձր արուեստագէտ, որ արժանի է յատուկ մասնագիտական ուսումնասիրութեան, որքան էլ մեծածախս լինի այդպիսի մի գիրք։ Այդ տեսակէտից միայն Սարգիս



Պատկ․ 24

Պիծակը՝ ԺԴ․ դարի առաջին կիսում, կարող է մրցել Թորոսի հետ։ Համեմատութեան համար տալիս ենք թերթ 8–ի խորանը (Պատկ․ 5), որ համեմատելի է Պատկ․ 25–ի հետ, իսկ երկաթագիր գրչութեան մասին գաղափար է տալիս պատկ․ 6։ Պատկերը 12 տարեկան Յիսուսն է տաճարի մէջ (եր․ 426)։

Այս Ձեռագրից է արտանկարուած Սեբաստիայից ոչ հեռու Ենիխանի եկեղեցու աւետարանը, որ տեսել ենք 1914 թուականին, եւ այժմ գտնւում է Վաշինգտոնի յիշեալ թանգարանում, ոչ այնպիսի ճոխութեամբ եւ գեղեցկութեամբ, ինչպէս բնագիրն է, բայց արժէքաւոր իր ժամանակի համար, յատկապէս գեղեցիկ, բոլորգիր գրչութեամբ։ Գրիչն է Սեբաստացի Բարաղամ դպիր որդին Միքայէլ, որ յիշուած է ընծայականի եւ գլխաւոր յիշատակարանի մէջ։ Ժամանակը որոշուած է ընծայականի մէջ այսպէս, եր․ 29